№ 75 ՀԻՆԳՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 15 1904 ՀԻՆԳՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 15 № 75

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական տեսութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գիւղական բանկեր և մանր փոխառութիւններ. Նամակ Բալախանիից. Նամակ Գանձակից. Նամակ Նոր-Նախիջևանից. Նամակ Բաթումից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Պատերազմի շուրջը. Սալմաստի ցաւոտ կողմերը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Եւրոպական քաղաքական աշխարհի առանձին ուշադրութիւնն է գրաւել ֆրանսիական նախագահ Լուբէի ճանապարհորդութիւնը դէպի Հռոմ։ Այդ ճանապարհորդութեան մասին խօսվում էր վաղուց և նրա մէջ քաղաքագէտները ձգտում էին նշմարել Ֆրանսիայի և Իտալիայի յարաբերութիւնների բարւոքման համար մի ամուր գրաւական։ Ճանապարհորդութիւնը սկսվել է և երկու պետութիւնների ներկայացուցիչները մտերմական խօսքերով ողջունել են միմեանց։ Ֆրանսիական նաւատորմը մեծ կազմով, բազմաթիւ նաւերով, եկել է Նէապոլի մօտերքը՝ առանձին հանդիսաւորութիւն ընծայելու Լուբէի ճանապարհորդութեանը։

Քաղաքական մամուլը որոշ զգուշութեամբ և վերապահութեամբ է խօսում այն գործնական հետևանքների մասին, որոնք կարող են առաջ գալ Ֆրանսիայի և Իտալիայի բարեկամական յարաբերութիւնների ամրանալուց։ Մի բան, յամենայն դէպս, ընդգծվում է, իբրև ժամանակակից հետաքրքրութեան երևոյթ, այն, որ աւելի ու աւելի ամրապնդվում է ցամաքի պետութիւնների խաղաղ քաղաքականութեան տրամադրութիւնը։ Եթէ Իտալիան, որ պատկանում է երեքպետեան դաշնակցութեան խմբին և Ֆրանսիան, որ երկպետեան դաշնակցութեան անդամն է, միմեանց հետ բարեկամ են և այժմ աւելի ու աւելի մտերմանում են, ուրեմն աւելի ևս թուլանում է այն երկիւղը, որ լսվում է երբեմնակի երկու դաշնակցական խմբերի պատերազմական դիտումների մասին։ Աւելացրէք դրան և այն, որ երեքպետեան դաշնակցութեան աւագ անդամը, Գերմանիան, ներկայումս ամենաբարեկամական զգացմունքներ է տածում դէպի Ռուսաստանը։

Անկասկած Եւրոպայում ցամաքի պետութիւնները ցանկանում են խաղաղութիւն պահպանել և խուսափել այնպիսի գործողութիւններից և վարմունքներից, որոնք պատճառ կարող էին դառնալ միջազգային յարաբերութիւնների լարվելուն և անախորժ ընդհարումներ առաջ բերելուն։ Խոշոր պատերազմի ուրուականը սարսափեցնում է եւրոպացիներին, որոնք տեսնում են նրա մէջ ոչ միայն քաղաքական, այլ և տնտեսական մեծ վտանգներ պետութիւնների համար։

Նոյն իսկ Անգլիան, որ մինչև վերջին տարիները խուսափում էր դաշնակցութիւններ կազմելուց, փորձեց յատուկ դաշնագիրներով կապվել Եապօնիայի, Գերմանիայի և Ֆրանսիայի հետ որոշ միջազգային խնդիրների վերաբերութեամբ։ Բայց և այնպէս նա պահում է իրան ցամաքի պետութիւններից անկախ և նրա վերաբերութեամբ չէ կարելի ասել, թէ որքան հաստատ և ամուր կերպով նա ներկայումս փայփայում է համաշխարհային խաղաղութեան գաղափարը։ Եւ թէև անգլիական զօրքերը շարժումներ են կատարում Տիբետում և նաւատորմը պտոյտներ է անում զանազան ծովափներում, այնուամենայնիւ անգլիական պետական մարդիկ հաւատացնում են, որ Անգլիան ներկայումս ցանկանում է միայն և միայն խաղաղութիւն։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՒՂԱԿԱՆ ԲԱՆԿԵՐ ԵՒ ՄԱՆՐ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ

(Նամակ Երևանից)

I

Գիւղացին կեղեքվելու երկու յայտնի պատճառներ ունի։ Առաջին՝ երբ նա դիմում է վաշխառուին դրամ փոխ առնելու և երկրորդ, երբ ամիսներ առաջ վաճառում է իր ապագայ բերքը պակասով, կէս, նոյն իսկ չնչին գնով նոյն վաշխառուին կարիքի օրերում։ Այս ընդհանուր երևոյթ է ամեն մի տեղի, ամեն մի ժողովրդի համար, միայն տարբեր ձևերի և տարբեր պայմանների մէջ։

Այժմեան գիւղացին գտնվում է դրամի անվերջ կարիքի մէջ. նա համարեա թէ փողի երես չէ տեսնում. ի հարկէ, խօսքը անհատների մասին չէ։ Ընդհանուր բնաւորութիւն կրող այս ցաւալի հանգամանքը դարձել է այն օղակը, որը բերել շղթայել է միմեանց անխզելի կապերով գիւղացուն ու վաշխառուին, կեղեքողին ու կեղեքվողին, մի դրութիւն, որը ստեղծել, ծնել է տնտեսական մի քայքայված վիճակ։

Գիւղացին—այդ աշխատաւոր, բայց միշտ էլ զուրկ ու աղքատ տարրը—տարվայ մէջ երկու անգամ դրամական նեղ կացութեան մէջ է ընկնում, որից ազատվելու համար նա պատրաստ է ամեն մի պայման յանձն առնել։ Այդ՝ հարկերը գանձելու օրերն են—սերմունքի օրերը, երբ ինչ տեղից էլ լինի, պիտի ճար տեսնէ խեղճ գիւղացին և իր հարկը վճարէ։ Եւ ահա «ամպ օր շրջող գայլի» պէս վաշխառուն բերում գցում է իր ցանցի մէջ, ոչ թէ յիմար, այլ անճար գիւղացուն և եկ ու այդ ցանցի միջից ազատիր նրան։

Այժմ շատ քիչ դէպքերում վաշխառուն համաձայնում է տուած պարտքը դրամով յետ ստանալ։ Զէ՞ որ տոկոսային ամենամեծ չափը, նոյն իսկ 50%, այնուամենայնիւ չէ կարող հաւասարվել այն վաստակին, որը սպասվում է մթերքի գնումից։ Եւ վաշխառուն, օգտվելով գիւղացու նեղ դրութիւնից, առևտրի անուան տակ բաժանում է դրամ. այս ինչ է,—ցորենի փող, այս ինչ է,—բամբակի փող, այս ինչ է,—խաղողի փող, և այլն։ Գիւղացու մէկը վերցնում է 10 րուբլի՝ կալին մի խալվար ցորեն տալու պայմանով, մինչդեռ ցորենը արժէ 20 րուբլի։ Միւսը վերցնում է 8 րուբլի՝ այգեկոյթին մի խալվար խաղող պահ տալու պայմանով, մինչդեռ խաղողը արժէ 14—15 րուբլի։ Երրորդը՝ ընդունում է բամբակի փող իւրաքանչիւր լիտր հնձաւորի համար վերցնելով 60 կոպէկ, մինչդեռ 90 կոպէկ, 1 րուբլի արժէ։ Չորրորդը վերցնում է իւղի փող՝ լտրի համար 1 ր. 60 կոպէկից մինչև 2 րուբլի, մինչդեռ նա արժէ 4 րուբլի և այսպէս անվերջ գնումներ, կանխագնումներ բոլոր բերքերի վերաբերմամբ։

Եւ ինչ է դուրս գալիս. մինչդեռ 50% համարվում է սոսկալի և նոյն իսկ յանցաւոր գործողութիւն, առևտրի անուան տակ մթերքների կանխագնումով ստացված վաստակը հաւասարվում է 100%-ի, այն էլ մի քանի ամիսների համար, որ մի և նոյն է 200%։ Եւ ահա այս ձևով աշնան միջոցին, կալի ու այգեկոյթի ժամանակ, երբ գիւղացու մառանն ու ամբարը պիտի լցվէին, նա ստիպված դուրս է տալիս իր բերքը, իր աշխատանքի վաստակը, դատարկվում ամեն բանից։

Յաճախ գիւղացին կողոպտվում, տոկոս է վճարում կրկնակի կերպով։ Գալւան, որը սովորաբար հարուստ վաշխառու դասին է պատկանում, իր դրամով վճարում է գիւղական հարկը և ապա բաժանում ծխերի վրա, թայջի անում—ու ինքը հաւաքում. ի հարկէ, գալւայի փողը առանց տոկոսի չի լինի, թէկուզ նա տասն օր միայն առաջ վճարած լինի։ Այդ տոկոսը իր փայ ու բաժինով հանդերձ գիւղացու «ջանից» դուրս գալուց յետոյ՝ նա նորից դիմում է վաշխառուին փող վերցնելու՝ մթերքներ տալու պայմանով։ Այս հանգամանքը ահա քայքայում է գիւղացու տնտեսութիւնը, կործանում շատ միութիւններ հողագործ դասակարգի շարքերից։

Այս լուրջ խնդիրը այժմ կենտրօնացնում է իր վրա լաւագոյն մտածողների ուշադրութիւնը և խնդրի լուծումը սպասում։

Պէտք է ազատել գիւղացուն վաշխառուի ճանկերից, պէտք է գիւղացուն օգնութեան հասնել փոխառութեամբ, եթէ ուզում ենք նրան ազատ պահել անխիղճ տոկոսների և մթերքների կիսականխագնումների քայքայումից։ Ահա այն միջոցը, որի նկատմամբ բոլորն էլ համակարծիք են։ Բայց ինչ ճանապարհով անել այդ։

Ինչպէս մեր նախորդ յօդուածում տեսանք, փոխատու խնայողական ընկերութիւնները, որքան էլ լաւ սկզբունքներ ունենան նրանք, եթէ ոչ միանգամայն, յամենայն դէպս դժւար իրագործելի բաներ են գիւղական դասի մէջ։ Առաջին խոչընդոտը լինելու է դրամը. հարուստ վաշխառու դասը ոչ միայն դրամ չի տայ, այլ և կաշխատէ խափանել մի այդպիսի գործ, որովհետև իր շահերին վնաս է այդ. չքաւոր, կարիքի մէջ եղող դասը, խօսք չը կայ, որ դրամ չի ունենայ և երկրորդ՝ գործը ղեկավարելու համար չեն լինի մարդիկ. ժողովրդի շահերին նուիրված, երիտասարդ, ինտելիգենտ ոյժեր ոչ միայն քիչ, այլ և գործելու հնարաւորութիւնից դուրս չէզոքացման վիճակի մէջ են դրված։

Միակ միջոցը, մեր ներկայ պայմաններում, որը կարող էր այս կարիքին բաւարարութիւն տալ, այդ գիւղական բանկն է, որին կը նուիրենք մեր միւս յօդուածը։

Ա.—Դօ

ՆԱՄԱԿ ԲԱԼԱԽԱՆԻՑ

Ապրիլի 4-ին

Անցեալ մարտ ամսի 29-ին տեղի ունեցաւ Բենկենդօրֆ և ընկ. առևտրական տան վերաշինած՝ հանրամատչելի թատրոնի բացումը։ Աւելի ճիշդ կը լինէր ասել՝ «յարմարեցրած», որովհետև ներկայ շինութիւնը սկզբում ծառայելիս է եղել որպէս էլէքտրական կայարան նոյն առևտրական տան հողաբաժնի նաւթահանքի համար։

Ինչպէս յայտնի է, էլէքտրականութեամբ փորելու սիստեմը մեզնում ընդհանրապէս աջողութիւն չը գտաւ և Բենկենդօրֆ և ընկ. այդ մեծ շինութիւնը մօտ երկու տարի դատարկ ընկած էր։ Այդ ժամանակամիջոցից մի երկու տարի էլ առաջ այրվել էր յիշեալ ֆիրմայի կլուբի դահլիճը, որը քիչ շատ յարմարութիւն ունեցող դահլիճն էր ամբողջ Բալախանիում և ուր քանիցս տեղի են ունեցել հայոց ներկայացումներ. այժմ, ուրեմն, շնորհիւ նաւթի բարձր գներին, Բենկ. և Ընկ. այս նոր հանրամատչելի թատրոնը փոխարինում է նախկին կլուբի դահլիճին, միայն, ի հարկէ այն տարբերութեամբ, որ այժմ ներկայացումները տրվում են ոչ միայն Բենկենդօրֆի և Ընկ. ծառայողների, այլ ընդհանրապէս՝ հասարակութեան համար։

Թատրոնի շինութիւնը արտաքուստ ոչնչով չէ տարբերվում բալախանեան սովորական արհեստանոցներից, իսկ ներքուստ մի կատարեալ թատրոն է, իր գեղեցիկ և բոլորովին թարմ դեկօրացիաներով և այլ սարք ու կարգով։ Ի հարկէ, կան թերութիւններ, որոնց պատճառը հէնց ինքը շինութիւնն է, որը այլ նպատակի համար է եղել կառուցած։ Պատրաստութիւնները տեսնվում էին ամբողջ ձմեռվայ ընթացքում և հազիւ հազ վերջացան Զատկի տօներին։ Դերասանական խումբը հրաւիրված է Մօսկվայից և բաղկացած է մօտ 20 հոգուց։

Ինչպէս ասացինք, թատրոնի բացումը տեղի ունեցաւ մարտի 29-ին և մի շաբաթվայ ընթացքում տեղի ունեցան 7 ներկայացումներ ռուսերէն լեզուով։ Վեցերորդ ներկայացումը ցերեկվայ էր և երեխաների համար կէս գնով։

Մենք ներկայ էինք միայն վերջին ներկայացման և ճիշդն ասած՝ գոհ մնացինք։ Ներկայացումը անցաւ ընդհանրապէս աջող։

Գործի յաջողութիւնը մեծ մասամբ կախված է գներից. սա պարզ ճշմարտութիւն է։ Բենկենդօրֆ և ընկերութեան թատրոնը, եթէ իսկապէս հանրամատչելի է, պէտք է ունենայ նաև հանրամատչելի գներ։ Լօժա—6 ր. 40 կոպէկ և առաջին կարգը—2 ր. 10 կոպէկ մենք համարում ենք թանգ։ Մի ակնյայտնի ապացոյց մեր ասածներին։ Սկզբի երեք ներկայացումները աւելի քիչ հանդիսականներ գրաւեցին հէնց այն պատճառով, որ վերջին կարգը 50 կոպէկ արժէր. բայց երբ յետին շարքը դարձրին 10 կ. և ըստ այնմ միւսները—հանդիսականների թիւը հետզհետէ աճեց և 7-րդ ներկայացմանը գրեթէ դահլիճը լի էր։

Երկու խօսք ևս։ Թատրոնի յաճախորդների գրեթէ կէսը հայեր են և այս հանգամանքը մի աւելորդ անգամ ևս ցոյց է տալիս, թէ Բալախանիում որքան մեծ պահանջ կայ հայոց ներկայացումների։ Բալախանիի ծառայողը և արհեստաւորը ընդհանրապէս սիրում են բեմը, ապացոյց՝ քաղաքում տեղի ունեցող հայկական ներկայացումների յաճախորդների մեծ մասը բալախանցիներն են, որոնց Բագու ներկայացման գնալը հազար ու մի նեղութիւնների և կարելի է ասել՝ շռայլ ծախսերի հետ է կապված։ Բալախանիում հայոց ներկայացումները մեծ յարմարութիւն կը լինէին տեղիս ծառայողների և բանւորների համար։ Սպասել, որ հայ ֆիրմաներից որ և է մէկը հետևէր Բենկենդօրֆի օրինակին—գժութիւն կը լինէր։ Նաւթարդիւնաբերողների խորհուրդն էլ ահա այժմ օդային ամրոցներ է կառուցանում և մտածում... Մեր յոյսը էլի հայ բեմի բազմաչարչար դերասանների վրա է. յոյս ունենք, որ Թիֆլիսի հայոց դրամատիքական ընկերութեան խումբը կօգտվի նոր թատրոնի յարմարութիւնից մի շարք խելացի զուարճութիւններ ընծայելու իրանց սպասող բալախանցիներին։

Մ. Եսայեանց

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Ապրիլի 10-ին

Գանձակում և նրա նահանգում վերջին տարիները գինու գները չափազանց ընկնում են։ Ես քրքրում եմ իմ մի բարեկամիս մատեանը, որտեղ յականէ յանուանէ գրված են իւրաքանչիւր տարվայ գինու ծախսերը։ Այդ այն ժամանակներն է, երբ գանձակեցու այգիները մուտ չէին գործել ներկայ հիւանդութիւնները, հետևաբար այգիների վրա աւելի սակաւ էր փող ծախսվում, քան այժմ, երբ այգիները հիւանդ են զանազան բուսական պարազիտներով։ Այն ժամանակ թէ այդ հիւանդութիւնները չը կային և թէ գինին ծախվում էր աւելի բարձր գներով ու այդպիսով այգեգործը, իր ստացած գինին վաճառելով, թէ կարողանում էր իր արած ծախսերը ծածկել և թէ մի բան էլ վաստակել։ Վեց տարի առաջ գինին ծախվել է վեդրօն 2 ր. 40 կոպ. և այնուհետև իւրաքանչիւր տարի աստիճանաբար ընկնելով՝ հասել է ներկայ առասպելական էժան գներին, այն է 90—80 կոպէկին։

Եթէ հաւատանք ոմանց կարծիքին, գինու ներկայ գների ընկնելը պիտի վերագրենք այն բանին, որ այգիների տարածութիւնը ընդարձակվել է։ Օրինակ, կովկասեան նախկին փոխարքաների հրամանով արգելված էր առանց թոյլտւութեան նոր այգիների շինութեան—վազ տնկելուն ձեռնարկելու, որովհետև Գանձակի գետի ջուրը շատ մեծ դժուարութեամբ բաւականութիւն էր տալիս եղած բուսականութեան, և ամենագլխաւորն է՝ այգիներին։ Բայց գերմանացիներից շատերը, օգտվելով միրաբների ու զանազան ստարօստների անտարբերութիւնից ու ջրի վերակացու ինժեների անհոգութիւնից, ահագին տարածութեամբ նորանոր այգիների շինութեան ձեռնամուխ եղան։ Այդպիսով մի անասելի դժուարութիւն ստեղծեցին թէ իրանց համար և թէ հին այգետէրերի համար, որոնք ամառը նեղվում են ջրի սակաւութիւնից։ Եթէ սրա վրա աւելացնենք և այն հանգամանքը, որ մի քանի պարոններ, վերջին տարիներում, օգտվելով Գանձակի գետերից, նրա հոսանքում գտնվող ծառերը ահագին քանակութեամբ կտրելով, վառելու փայտի համար կրում են գետով, առանց մի րոպէ մտածելու, թէ ինչպիսի վնաս են պատճառում և ջրի սակաւութեան պատճառ դառնում։

Խաղողի բերքից քրիստոնեաները պատրաստում են յատկապէս գինի, իսկ Թուրքերն իրանց բերքը վերջին տարիներս արտահանում են մինչև անգամ հեռաւոր Ռուսիայի քաղաքները։ Հայի վազները գլխաւորապէս, Կախէթի և Լկէնի վազն է, որից յատկապէս կարելի է միայն գինի պատրաստել։ Իսկ պարսիկներին շարիաթն արգելում է թէ գինի շինել, և թէ քրիստոնեաներին գինի շինելու անունով խաղող ծախել. այդ պատճառով նրանք տնկում են յատկապէս «Թավրիզենի» ընտիր ուտելու խաղողը, որից նրանք չորս անգամ աւելի շատ օգուտ են ստանում, քան թէ հայերը։

Խաղողը քաղելուն պէս՝ հեռու Ռուսաստանից գալիս են մեզ մօտ խաղող գնելու։ Անցեալ տարի խաղողը այստեղ ծախվեց—1 ր. 80 կոպէկով, ապա աստիճանաբար բարձրանալով՝ հասաւ 2 ր. 40 կոպէկի։ Մինչև Պետերբուրգ—պօստի վարձն է մօտ 1 ր. 20 կ., իսկ Պետերբուրգում ծախվել է 5—6 ր. պուդը։ Այսպիսով Թուրքերը բաւական օգտվում են ինչպէս անցեալ տարի, նոյնպէս նախկին տարիները, երբ Բաթումից դէնը խաղող չէր անցնում։

Իսկ քրիստոնեաները իրանց խաղողը, անասելի նեղութիւններ կրելով, գինի են պատրաստել ու ածել տակառների մէջ, սպասում են մուշտարու։ Վերջինս գալիս է վեդրօին 90—80 կ. առաջարկում, (պուդ խաղողին գալիս է 70 կոպէկ), այն էլ մեծ մասը ապառիկ։ Սա մի այնպիսի գին է, որը ոչ թէ այգետիրոջ օգուտ է տալու, այլ զգալի վնաս։

Անցեալ տարվանից գինու մեծ պաշար է մնացել հարևան գերմանական Ելենէնդօրֆ գիւղում։ Եթէ մնայ անվաճառ, առանց մարգարէ լինելու կարելի է գուշակել, որ միւս տարին գինու գները իջնելու են 40—50 կոպէկի, ինչպէս նախանցեալ տարվայ անվաճառ մնացած գինիները ներկայումս առաջարկում են 70—75 կոպէկով, սակայն գնող չը կայ։

Ո՞ւմ պարտքն է մտածելու և այս կրիզիսի առաջն առնելու, թող օր առաջ հոգան, ապա թէ ոչ մեր այգեգործները իսպառ կորած են։ Առանց այն էլ շատերի այգիները ծախվում են։

Աւ. Սահակեանց

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

Ապրիլ 5-ին

Լինում են րոպէներ, երբ տխրահռչակ միջավայրում ապրող մարդը մի վայրկեան ընթափվելով՝ դիտում է իր շրջապատը,—արդեօք կա՞յ այնտեղ մի մխիթարական բան, թէ ոչ. և երբ նա տեսնում է, որ ինքը շրջապատված է բոլորովին այլ հանգամանքներով, քան ինքն էր սպասում, մտածում է թողնել այդ վայրը, այդ գարշ մթնոլորտը և փոխադրվել դէպի աւելի մի մխիթարական տեղ...

Նոր-Նախիջևանում մարդ այս տեսակ տխուր ու յուսահատեցուցիչ վայրկեանների շատ է պատահում։ Շա՜տ անմխիթարական է մեր քաղաքը։ Նոր-Նախիջևանցին և նրանք, որո՛նք այս քաղաքի մասին մի փոքր լաւ կարծիք ունեն, թող ներեն ինձ իմ այդ քաղաքի վերաբերմամբ ունեցած յոռետես հայեացքի համար։ Այստեղ լսվում է վշտացած Նոր-Նախիջևանցու ձայնը, այն Նախիջևանցու, որը շատ անգամ գտնվել է այդ տեսակ տխուր մոմենտների ազդեցութեան տակ և որը սրտի ցաւով խօսում է՝ ունենալով իր ձեռքին հաւաստի փաստեր, այո, տխուր փաստեր։

Այո, եթէ արտաքինից նայենք, Նոր-Նախիջևանը շատ լաւ ու գեղեցիկ քաղաք է։ Փոքրիկ քաղաք, սակայն ունի գեղեցիկ թատրոն, ակմբանոց, ունի էլէքտրաքարշ, հիանալի Ալէքսանդրեան պարտէզ, որ լի է ամէն տեսակ հեշտական զուարճութիւններով, ունի եօթ հատ հայոց շէն ու պայծառ եկեղեցի, ունի վերջապէս և թեմական դպրանոց։ Ունի, ունի...

Ունի արտաքին փայլ, բայց ներսը լի է աղտեղութեամբ։

Եթէ այսօր քաղաքումս քիչ թէ շատ կարգին երիտասարդ-մարդիկ կան, դրանց էլ մատով պէտք է հաշւել. իսկ այդ կարգիններն էլ անշարժ են, կղզիացած են իրարից.—«нейтралитетъ соблюдаютъ»?...

Բայց ունենք մենք նոյնպէս մի այլ երիտասարդութիւն, որ իրան Նոր-Նախիջևանի ինտելիգենցիան է համարում. դրանք «պրիկաշչիկներ» են։ Չարժէ դրանց մասին խօսել։

Ունենք բուրժուա դասակարգ։ Рѣчь о нихъ даже молчитъ... Իսկ իգական սեռը հօ կորա՜ծ է, կորա՜ծ։

Ահա այս ահագին ամբոխի մէջ մի խումբ կարգինները ինչ կարող են անել, քանի որ իրանք էլ մի բան չեն։

Վախենալ իրարից, կասկած, կռիւ և, այլն... ահա վերջիններս էլ ինչով են պարապում։ Դրանցից ամէն մէկը, կամենալով իրան ցոյց տալ, թութակի նման կրկնում է այստեղ հնացած փրազը. «Եղբա՛յր, մի շրջան չունենք, մի կարգին մարդիկ չունենք, որ մի բան անենք»։

Այս էլ ձեզ պօլիտիկա։

Ի՞նչ համերաշխ գործունէութիւն, ի՞նչ մտերմական յարաբերութիւն կարելի է սպասել այն տեղից, որտեղ բուն են դրել չարիքը, անհամաձայնութիւնը և կեղծիքը, այն էլ մի զոյգ կարգին համարված մարդկանց մէջ։

Գերի դառնալ եսին, օտար համարել ընկերոջ, զուրկ լինել ամէն տեսակ հետաքրքրութիւնից։ Ահա ինչ են են մեր խորհուրդներն ու գործերը։

Եթէ գիտենար հանգուցեալ Պատկանեանը, որ իր թունաւոր խօսքերը նախիջևանցուն ոչ մի օգուտ չը պէտք է տան, անշուշտ մի անգամ միայն կը թքէր անպատկառների հաստամաշկ երեսին։ Այդ էլ բաւական էր։

Բայց ի՞նչ արած՝ ժամանակը յեղաշրջում է ամէն ինչ։

O tempora, o mores!

Ա. Սպանդարեան

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

Ապրիլ 7-ին

Երկար ընդմիջումից յետոյ վերջապէս կիրակի, ապրիլի 4-ին, տեղիս Երկաթէ Թատրոնի բեմից նորից լսվեց հայ բարբառով ներկայացում։

Տարօրինակ բան. Թիֆլիսում ներկայացում եղած ժամանակ յաճախ կարդում ենք լրագիրներում, թէ «հասարակութիւնը միջակ էր, թատրոնը կիսով չափ դատարկ էր» և այլն, մինչդեռ այստեղի թատրոնը, կարելի է ասել, այլ ևս բաւարարութիւն չէ տալիս մեծութեան կողմից այստեղի հայ հասարակութեան և հայերէն ներկայացում եղած ժամանակ շատ անգամ տասնեակներով մարդիկ ստիպված են լինում յետ դառնալ՝ տոմսակ չը լինելու պատճառով։

Մենք գիտենք, որ մեծ նշանակութիւն ունեն երկար ընդմիջումները, նաև մի քանի այլ հանգամանքներ, որոնք նպաստում են տոմսակ ծախվելուն, բայց հաւատում ենք և նրան, որ Բաթումի հասարակութիւնը այլ ևս այն չէ, ինչ որ էր առաջ. Թատրոն յաճախելը նրա համար մի հասկանալի և անհրաժեշտ պահանջ է դարձել։ Որպէս ապացոյց, բաւական է ասել, որ առաջներում ներկայացման ժամանակ կասսայում հազիւ 25—30 րուբլու տոմսակ էր ծախվում, մինչդեռ հիմա ծախվում է մօտ 150—200 րուբլու։

Այդ ուրախալի երևոյթը ի նկատի ունենալով, ցանկալի էր, որ Թատրոնի գործով զբաղվող անձինք աշխատէին որքան կարելի է վառ պահել հասարակութեան համակրութիւնը դէպի թատրոն նախ՝ պիէսների ընտրութեամբ և երկրորդ՝ կարելիին չափ յաճախ կրկնելով ներկայացումները։ Մանաւանդ Բաթումի պէս մի քաղաքում, ուր ազգաբնակութեան մեծ մասը, եթէ թոյլ կը տրվի մեզ այսպէս ասել, մտաւոր զարգացման կարօտ դասակարգին է պատկանում, անհրաժեշտ է բեմի միջոցով և իրան հասկանալի լեզուով, հէնց իրանից, մասայի կեանքից վերցրած կենդանի օրինակներով զարկ տալ նրա մտաւոր զարգացման։

Կրկնում ենք, չէ կարելի չուրախանալ, երբ տեսնում էք սկզբներում տիրող անկարգ հըռհըռոցի և բզւոցների փոխարէն այժմ ամբողջ թատրոնը լուռ ու լարված ուշադրութեամբ հետևում է բեմից լսվող ամէն մի խօսքի և երբեմն մինչև իսկ պահանջում, որ բարձր ասեն խօսքերը, որպէս զի լաւ լսէ և հասկանայ, թէ ինչ է կատարվում պիեսայի ընթացքում։

Գալով տեղական թատերասէրների խմբին և նրանց բարեխիղճ վերաբերմունքին դէպի իրանց դերերը, պէտք է խոստովանել, որ այդ կողմից միանգամայն արժանի են նրանք համակրութեան։ Այդ բոլորից յետոյ մեզ մնում է ցանկալ վերացած տեսնելու մի անդուրեկան սովորութիւն, որ միշտ տեղի է ունենում մեր ներկայացումների ժամանակ.—դա շվվացնելն է, որ ոմանք նշանակութիւնը չը հասկանալով, նոյն իսկ յայտնի դերասանների խաղալու ժամանակ, շվվոցի սոսկալի ձայներ են հանում ծափահարութիւնների հետ միասին։

Գ. Գրիգորեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի երկաթուղային կայարանում անցեալ կիրակի օրը գտնվել է մի փոքրիկ անտէր-անտիրական աղջիկ, հազիւ 5—6 տարեկան հասակի։ Երեխային տեսնելով լաց լինելիս, տարել են մօտակայ ոստիկանատունը, իսկ այնտեղից առեւտրական Ժիրարդօվի դռնապանները տարել են իրանց պարոնի մօտ, որը պատսպարած երեխային զգեստներ է կարել տուել և ահա 10-11 օր է պահում է իր տանը։ Այժմ արդէն խնդիրը հասել է Խուդադեանի որբանոցի վարչութեան, որին դիմել է պ. Ժիրարդօվը, որը հոգ է տանում ձեռք բերելու հարկաւոր թղթերը՝ անտուն-անտիրական մանկիկին իր խնամքի տակ առնելու համար։

—

Լսում ենք, որ Թիֆլիսում կազմվում է այգեգործների մի ընկերութիւն։ Անցեալ շաբաթ այդ գործի ձեռներէց անձերը ժողովներ ունեցան։ Ընտրվել է մի յանձնաժողով, որին յանձնված է ընկերական պայմանագիր կազմել, ամէնաընտիր տեսակի սերմեր բերել տալ և որոնել մի յարմար պահեստատուն, որտեղ կարելի լինի սկսել սերմերի առևտուր։ Ընկերութեան անդամների թիւը սահմանափակ չէ լինելու. անդամ կարող են գրվել Անդրկովկասի բոլոր այգետէրերը։

—

Հետաքրքիր թւեր։ Վրաց «Մօամբէ» ամսագրի վերջին համարում բերված են մի շարք հետաքրքիր թւեր Թիֆլիսի և Քութայիսի նահանգների ազնւականութեան հողերի զանազան բանկերում գրաւ դրված լինելու մասին։ Թիֆլիսի նահանգի ազնւականութիւնը հիպօտեքի բանկերում գրած դրված ունի իր բոլոր հողերի մօտ $^{1}/_{3}$ մասը, 359,143 դեսեատին. այդքան գրաւ դրված հողերի համար պարտք է վերցված մօտ 8,000,000 րուբլի։ Իսկ Քութայիսի նահանգում մինչև 1898 թիւը գրաւ է դրված եղել 46,867 դեսեատին $2^{1}/_{2}$ միլիօն րուբլու։ Ուրեմն՝ առաջին նահանգում հողի մէկ դեսեատինը գրաւ է դրված մօտ $22^{1}/_{2}$ րուբլու, իսկ երկրորդում՝ մօտ 53 ր.։ Քութայիսի նահանգի գրաւ դրած հողերի չափի քչութիւնը բացատրվում է նրանով, որ այդ նահանգում առհասարակ և սակաւահողութիւն է տիրում, և թէ ազնւականութեան հողաբաժիններն այնտեղ աւելի մանր են և հողի գինն աւելի բարձր։ Կալուածներից շատերը մնում են բանկի վրա և աճուրդով ծախվում, պարտքն իր ժամանակին չը վճարվելու պատճառով։ Դրանից առաջանում է այն, որ ազնւականութեան հողերն անցնում են ոչ ազնւականների, դրամատէրերի ձեռքը։ Այդպէս է եղել միշտ և ամէն տեղ, կաւելացնենք մենք. փողը հաւասարեցրել է բոլոր դասակարգերին և արեան ազնւականութեան ձեռքը մնացել է լոկ անունը, իրաւունքը, իսկ նիւթն անցել է աղա-դրամատէրերի ձեռքը։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը, երէկ, ամսի 14-ին, ուղարկել է զինւորական ատեանին. 1) այն զինւորակոչների անուանացուցակը, որոնք ներկայ 1904 թուին ենթարկվում են վիճակահանութեան. 2) այն անձանց ցուցակը, որոնց տարիքը պիտի որոշել արտաքին տեսքով. 3) այն անձանց ցուցակը, որոնց տեղը յայտնի չէ և պիտի յայտարարվի և 4) այն անձանց ցուցակը, որոնք մտել են զօրքի մէջ իբրև կամաւորներ։

—

Թիֆլիսի պ. նահանգապետը յայտնում է քաղաքագլխին, որ ներկայ թւականի նախահաշւով քաղաքիս փողոցները քարելու համար նշանակված է 57,000 րուբլի, մինչդեռ փողոցները անկարգ դրութեան մէջ են գտնվում։ Ուստի խնդրում է աշխատել ամառվայ ամիսներին կանոնաւորելու բոլոր փողոցները։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Ռուսաստանի եկեղեցիներում պատերազմական ժամանակի կարիքների համար դրված գանձանակներից մինչև ապրիլի 4-ը հաւաքվել է 17,180 րուբլի։

—

Լրագիրները հաղորդում են, որ հանգուցեալ փոխ-ծովապետ Մակարովի միակ 17 ամեայ գեղեցկուհի դուստրը նորին կայսերական Մեծութեան Թագուհի կայսրուհու ֆրէյլինաների շարքն է ընդունված։

—

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են. «Վերջին թատրոնական սեզոնին (1903—1904 թ.) այստեղ, Մօսկվայում, Սօլօդօվնիկօվի թատրոնում երգում էին, ի միջի այլոց, տիկին Տէրեան-Ղորղանեանը և Արշակ Կոստանեանը, որոնք վայելում են Մօսկվայի հասարակութեան յարգանքը։ Հայերն էլ յետ չէին մնում թատրոնը յաճախելուց և բնական է, որ ուրախ էին իրանց երկու հայրենակիցների աջողութեանը, մանաւանդ այլ դէպքերում, երբ յիշեալ երգիչը և երգչուհին միասին էին բեմ դուրս գալիս, օրինակ, «Կարմէն» օպէրայում, այն էլ ոչ աննշան, այլ գլխաւոր դերերում։ Արդարև, անսովոր երևոյթ էր շատերիս համար տեսնել, թէ ինչպէս մեր երկու հայրենակիցները օտարազգի բազմաթիւ հանդիսականների ուշադրութիւնն են գրաւում Մօսկվայի նման ահագին քաղաքում, ուր երաժշտական նուրբ ճաշակը շատ զարգացած է և պահանջները խիստ։ Ափսոս, որ այս տարի բացակայում էր բարիտօն պ. Բ. Ամիրջանը, որ Թիֆլիսումն էր երգում։ Մեծ պասին առհասարակ դերասանները միշտ հաւաքվում են Մօսկվա, իրանց թատրոնական բիւրօն, ուր ապագայ անգաժըմենտի բանակցութիւններ են անում։ Ամիրջանը չէր երևում մինչև մեծ պասի վերջը։ Բայց ահա, ըստ սովորութեան, տեղիս հայ հասարակութիւնը Աւագ հինգշաբթի, սուրբ գիշերը խռնվում եկեղեցում և որչափ մեծ է լինում նրա զարմանքը, երբ 12 ժամի մօտ, սեղանի ետևից յանկարծ լսվում է Ամիրջանի հզօր բարիտօն ձայնը։ Զատկի շաբաթ երեկոյեան և կիրակի օրը առիթ ունեցանք դարձեալ մի քանի անգամ լսելու նրան մեր եկեղեցում»։

—

ՇԻՐԱԿԻՑ մեզ գրում են. «Վերջին եկած ձիւնը անսպասելի էր բոլորի համար, գիւղացին նոր էր սկսել ցանքսը, երբ յանկարծ 1 արշին խորութեամբ ձիւնը ծածկեց մերկ դաշտերը. ուրախալի էր, որ եղանակները շուտ տաքացան և բոլորը հալվեց երեք օրում։ Ցանքսը շարունակվում է տենդային արագութեամբ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

Եապօնացիների դեսանտաւորութիւնը։ Եթէ նայենք հեռագրական վերջին տեղեկութիւններին, եապօնացիները մտադիր են զօրք ափ իջեցնել Լեաօդունեան ծովափի կէտերից մէկում։ Բեռլինի «Tageblatt» լրագիրը ցոյց է տալիս այն կէտերը, ուր հաւանականութիւն կայ զօրք իջեցնելու։ Եապօնական փոխադրողական նաւատորմը, բաղկացած մօտ 700 նաւերից, ուղղվեց դէպի Կինչաու, որ 50 վերստ հեռու է Պորտ-Արտուրից դէպի հիւսիս, երկաթուղու գծի վրա և Կվանտունեան թերակղզու ամէնանեղ տեղում, Տալիենվանի հանդէպ։ Որպէս զի կարելի լինի մեկուսացնել Պորտ-Արտուրը և կտրել հաղորդակցութիւնից ցամաքի հետ, բաւական է գրաւել մի նեղ հողաբաժին, մօտ $2^{1}/_{2}$ վերստ երկարութեամբ։ Այդ դիրքը, ի հարկէ, ամրացրված է ռուսների ձեռքով, որոնց յայտնի է, թէ ինչ արդիւնք ունեցաւ նրա անպաշտպանութիւնը 1894-ին։ Սակայն Կինչաու ծոցը շատ փոքր է, և նաւերը չեն կարող շատ մօտենալ ափին, այնպէս որ այստեղ զօրք իջեցնելը մեծ դժուարութիւններ ունի։ Այդ ծոցը կազմում է Սօսայիտի ծոցի հարաւային մասը։ Ապա գալիս է նոյն ափի վրա Պորտ-Ադամսը, որ կազմում է Սօսայիտի ծոցի հիւսիսային մասը։ Այստեղ ջուրը աւելի խորն է և ափը աւելի նպաստաւոր է զօրք իջեցնելու համար։ Բայց ծոցը այնքան խոր կերպով մըտել է ափի մէջ, որ նրան շատ հեշտ է հարուածել զանազան կէտերից։ Աւելի նպաստաւոր են դեսանտի (ափ իջնելու) համար Թերակղզու ափերը դէպի հիւսիս, Ֆուչաուի մօտ։ Վերջապէս հնարաւոր է դեսանտը և Լեաօխէում, թէև այդտեղ ահագին դժուարութիւններ և վտանգներ է ներկայացնում։

Թէ այդ կէտերից ո՞ր մէկում եապօնացիները դեսանտ կանեն, դեռ անյայտ է։ (Новое Время)։

Երբ հնարաւոր կը լինի միջամտութիւնը։ Ամերիկական զինւորական կցորդ կապիտան Շեպտեցկին ասել է «Eclair» լրագրի թղթակցին, թէ նրա կարծիքով մինչև նոր տարին եւրօպական պատերազմական կցորդները, որոնք գտնվում են այժմ պատերազմի բեմի վրա, կարող են վերադառնալ տուն, որովհետև այդ ժամանակ արդէն պատերազմը վերջացած կը լինի։ Նա կարծում է նոյնպէս, որ օգոստոսից առաջ մեծ ճակատամարտեր չեն լինի։ Դեռ Պետերբուրգում նա լսել է, թէ Ռուսաստանի տարած առաջին յաղթութիւնից յետոյ Ֆրանսիան և Անգլիան կառաջարկեն պատերազմող կողմերին իրանց միջնորդութիւնը, որպէս զի վերջ դրվի արիւնհեղութեան։ Աւստրիական այդ օֆիցէրի կարծիքով, երկու կարծիք չէ կարող լինել պատերազմի ելքի մասին։ Եապօնական զօրքը չէ կարող հաւասարվել ռուսականի հետ և եապօնացիների այժմեան աջողութիւնները նշանակութիւն չունեն։

Անցեալ անգամ մենք առաջ բերեցինք նաև գերմանական զինւորական կցորդի կարծիքը, իսկ գնդապետ Գեադկէն, «Tageblatt» լրագրի յատուկ թղթակիցը, ենթադրում է, որ ռուսները շուտով կը վերջացնեն իրանց ոյժերի կենտրօնացումը Մուկդէնից դէպի հարաւ, իսկ եապօնացիները միայն այն ժամանակ կարող են Եալու գետը անցնել և գրաւել Մուկդէնից Պորտ-Արտուր տանող երկաթուղին, երբ նրանք կը շահեն ընդհանուր ճակատամարտը։ Աւելի հաւանական է սակայն, որ եապօնացիները Եալուից այն կողմը չեն գնայ և կը սպասեն ռուսների յարձակման Կորէայում։ Գնդապետը կարծում է, որ ռուսները հիմք չունեն վախենալու Պորտ-Արտուրի մասին և պատերազմի ընթացքի համար ահագին նշանակութիւն ունի Նիւչվանգի տիրապետութիւնը, որը, այդ պատճառով, սաստիկ ամրացրված է։ (Новое Время)։

Կորէայի վիճակը։ Ռուս-եապօնական պատերազմը ահագին գրականութիւն է ստեղծել Չինաստանի, Կորէայի և Եապօնիայի մասին։ Նորերս մի նոր գիրք ևս հրատարակվեց Անգլիայում Կորէայի մասին «Impressions of Korea» (Տպաւորութիւններ Կորէայի մասին) վերնագրով, որի հեղինակն է Րէջինալդ Ֆարրէր։ «Կորէացիները, ասում է հեղինակը, միակերպ անտարբերութեամբ վերաբերվում են թէ կեանքին և թէ մահվան։ Ճակատագիրը տանում է նրանց և նրանք հետևում են նրան վհատաբար, իբրև եզներ, որոնց քշում են սպանդանոց։ Ուստի ոչ մի զարմանալու բան չը կայ, որ արևելեան ազգերը վարվել են միշտ կորէացիների հետ, իբրև գրաստի հետ։ Ստրկի խոնարհութիւնը արդարացնում է բռնակալութիւնը։ Կորէացին—հուժկու, ջլուտ տղամարդ է, որ ամենից շատ զուարճանում է ըմբշամարտութեամբ։ Բայց այդ հուժկու տղամարդը այնքան հեզ է, որ թոյլ է տալիս տըկար եապօնացուն ծեծել իրան։ Եապօնացին երբեմն այնքան փոքր է, որ պէտք է ցատկէ, որպէս զի կարողանայ դիպչել կորէացու այտին։ Կորէայի չար բախտը վճռել է, որ նրա համար միշտ կուեն։ Նա զոհ է իր նպաստաւոր աշխարհագրական դիրքի և իր բնական հարստութիւնների։ Ժողովուրդը ծայրահեղ համբերող է և խոնարհութեամբ տանում է ամեն բան։ Կորէացիները նման են գէր, առողջ ոչխարների, որոնց կարելի է քշել, ուր կամենում են։

Մի այլ հեղինակ, Հենրի Նորման, որ 15 տարի ապրել է Հեռաւոր-Արևելքում, այն կարծիքի է, թէ կորէական ազգը ընդունակ կը լինէր վերածնութեան, եթէ միայն նա ազատվէր իր կառավարութիւնից։ «Անընդունակութիւնը, կաշառակերութիւնը և բռնակալութիւնը անսահման են, վկայում է Նորման կորէական կառավարութեան մասին։ Թագաւորը (այժմ նա կայսր տիտղոսն է կրում) կլանել է երկրի բոլոր եկամուտները։ Նոր պալատների վրա նա ծախսել է ամենը, ինչ որ նրա մինիստրները ծծել են ժողովրդից։ Սէուլում բազմաթիւ են այդպիսի պալատներ։ Վախկոտ թագաւորը, երկիւղ կրելով դաւադրութիւնից և դաւաճանութիւնից, այժմ շինել է տուել մի նոր պալատ եւրօպական դեսպանատների մօտ։ Թագաւորը զուարճանում է նոյնպէս զօրքով և նաւատորմով, որը, սակայն բաղկանում է մի փոքր շոգենաւից, որ գնված է եապօնացիներից։ Այդ շոգենաւը կառավարում են 23 ծովապետներ։ Կորէական զօրքը անընդունակ է արտաքին թշնամին վանելու, բայց աջողութեամբ աւերում է մանդերի գիւղերը։ Այդպիսի կռիւների մէջ դափնիներ են ձեռք բերել բազմաթիւ կորէական զօրապետները և մարշալները։ (Р. Вѣд.)

Եապօնացի մի բարօնի կարծիքը։ Բարօն Կանէգօ, որ այժմ յատուկ միսիայով գնացել է Միացեալ-Նահանգները, Նիւ-Եորկում, համալսարանական կլուբում կազմակերպված ճաշի ժամանակ, որին մասնակցում էին նախկին մինիստրներ, դեսպաններ, պրօֆէսօրներ, ծովապետներ, գեղեցիկ անգլիական լեզուով մի ճառ խօսեց, որի մէջ անկեղծօրէն խոստովանեց, թէ բոլոր իր բարեմասնութիւնները Եապօնիան պարտական է Անգլիային և Միացեալ-Նահանգներին։ Մենք չենք կռւում—ասում է նա—հողային նուաճումների համար կամ զինւորական փառասիրութիւնից դրդված, այլ այն նպատակով, որ Հեռաւոր-Արևելքում տարածենք անգլո-ամերիկական քաղաքակրթութիւնը։ Համառօտ կերպով յիշելով պատերազմի մասին, բարօնը Մակարօվի կորստեան մասին հետևեալն ասաց. «Մենք, եապօնացիներս, մեր թագաւորի հաւատարիմ անձնուէրներ, ողբում ենք ծովապետ Մակարօվի մահը, որ հաւատարիմ և առաքինի հպատակ էր իր թագաւորի։ Ծովային պատերազմների տարեգրութիւնների մէջ յաւիտեան կը մնայ նրա մասին մեծ անունը։» (Нов.)

ՍԱԼՄԱՍՏՑՈՒ ՑԱՒՈՏ ԿՈՂՄԵՐԸ

(Նամակ Պարսկաստանից)

Սալմաստը, Ատրպատականի այս հայաշատ գաւառը ունի ցաւերի ամբողջ մի շղթայ, բազմազան, բազմապիսի ցաւեր, որոնք առաջանում են տիրող կարգերից ու պայմաններից և ժողովրդի տհասութիւնից, տգիտութիւնից։ Այո, Սալմաստի հայը շատ ցաւոտ կողմեր ունի, բայց այսօր դրանցից միայն մէկն է մեզ զբաղեցնելու։

Իսկ ինչո՞ւմն է կայանում այդ ցաւոտ կողմը։ Սալմաստի հայ ժողովուրդը, ինչպէս և ամբողջ ազգաբնակութիւնը, տնտեսապէս վատթար և աննախանձելի կացութիւն է ներկայացնում։ Եւ այդ երևոյթը ունի անշուշտ իր պատճառները։ Այդ պատճառներից մէկն է «տուգանքը», որը որոշ, նոյն իսկ յայտնի տեղ է գրաւում Սալմաստի հայի տնտեսապէս քայքայվելու, յետ մղվելու գործում։

Անկեղծութիւն ասած բանը միանգամայն բացակայում է Սալմաստում. խօսքս հայերի մասին է, թէև դա կազմում է պարսկահայերի ընդհանուր գիծը։ Այդ կողմից պարսկական ազդեցութիւնը կատարել է իր դերը լի ու լի։ Իսկ այդպիսի ժողովուրդների մէջ դժուար թէ սէր, բարեկամական յարաբերութիւն գոյութիւն ունենայ։ Եւ իրօք չը կայ։ Մարդ կը դժուարանայ ցոյց տալ գէթ երկու մարդ, որոնք անկեղծ իրար սիրում են, իրար բարեկամ են։ Այն ինչ ատելութիւնը, ոխը, իրար ոտի տակ փորելը, իրար վնասելը՝ ընդհանուր է, կատարվում են դրանց պերճախօս փաստերը ամեն օր, ամեն ժամ... Սալմաստցի հայը իր հարևանին վնասելու համար ոչ մի միջոց բաց չի թողնի, նա որոշ դէպքերում խտրութիւն չի դնի միջոցների մէջ։ Շատ են այդ միջոցները. բայց ամենից սովորականը, ամենից գործածականն է «Դիլիման վազելը»։ Այդ միջոցը, «Դիլիման վազելը» որքան սովորական է, նոյնքան և աւերիչ։

Ամեն մի հասարակ դէպքի պատճառով սալմաստցի հայը դիմում է դէպի Դիլիման [1], դէպի դատաւորը, դէպի սարփարաստը, մի քանի խօսք փսփսում նրանց ականջին և իր հարևանին, շատ անգամ և իրան, ենթարկում տուգանքի։ Դատաւորը կամ սարփարաստը հէնց այդ են ուզում. նրանք անխիղճ կերպով «պլոկում» են և ճանապարհում, շատ անգամ և գանգատաւորին։ Տարեկան իւրաքանչիւր գիւղը առնուազն տալիս է այդպիսի «ջարմա» 500 թուման, շատ անգամ 1000 թուման, իսկ տարիներ են եղել, որ էլ աւելի։ Այդ արդէն տնտեսապէս մեծ հարուած է հայ ժողովրդի համար, որը առանց այդ էլ այնքան բարեկաւ վիճակի մէջ չէ։

Այդ բոլորը ի հարկէ առաջ է գալիս գլխաւորապէս տգիտութիւնից։ Բայց, ուրախութեամբ յիշատակում եմ, որ վերջերս երկու-երեք գիւղերից այդ հոսանքը, «Դիլիման վազելու» աւերիչ սովորութիւնը վերացել է։ Այդ գիւղերը ի հարկէ խրատվեցին կեանքի տուած «դառն փորձերից և դասերից», փորձեր և դասեր, որոնք իրանց մերկութեամբ ցցվում են ժողովրդի աչքի առաջ և պատկերացնում ճըշգրիտ իրականութիւնը։ Անթիւ գանգատներից, հազարաւոր փորձերից բնականաբար եկել են այն եզրակացութեան, որ մէջ տեղում էլի իրանք են վնասվում, պահանջածը չէ ստացվում, իսկ արդարութիւնը երբեք երևան չէ հանվում։ Եւ գիւղի մէջ ծագած վէճերը, կռիւները և խնդիրները հէնց իրանք էլ վերջացնում են. դրանց որոշումը աւելի հիմնաւոր, աւելի արդարացի կը լինի անշուշտ։

Այդպէս է, այո, միայն երկու-երեք գիւղում, իսկ մնացած գիւղերո՞ւմ։ Այդտեղ շարունակվում է նոյն աւերիչ սովորութիւնը, նոյն քայքայող հոսանքը։ Այդ կողմից ամենից աչքի ընկնող գիւղերն են Մահլամ և Սառնա։ Առաջինը այս երկու-երեք ամսվայ ընթացքում մի քանի հարիւր թուման «ջարմա» է տուել և բոլորովին իզուր, արդիւնք «խելքից պատուհասի»։

Ահա սալմաստցի հայի ամենացաւոտ կողմը, տգեղ սովորութիւնը, որ այնքան աւերած է առաջացնում և այնքան նիւթական զրկանքների ենթարկում։ Ժամանակն է թողնել կուելու այդ ցած, անարգ միջոցը, դէն շպրտել, հանել սրտերից փիս ոխը ու ատելութիւնը, թողնել «Դիլիման վազելու» վատ սովորութիւնը, և այդ բոլորի տեղ թող բուն դնէ սէրը, անկեղծ սէրը։

Ե. Ֆրանգեանց

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Մուշի հայ-լուսաւորչական առաջնորդը և Մուշի կրօնական-ծխական խորհրդի 11 անդամները սրանից երկու ամիս առաջ հեռագրով գանգատ ուղարկեցին սուլթանին այն բռնութիւնների մասին, որ թիւրքական զօրքերը գործում էին Խանուն տեղում։ Դրա համար բողոքաւորները անմիջապէս կալանաւորվեցին և ձգվեցին բանտ։ Աւագ շաբաթին Օրմանեան պատրիարքը անձամբ գնաց պալատը և «Fremdenblatt» լրագրի ասելով, յայտնեց, թէ նա կը դադարեցնէ զատկական բոլոր ժամերգութիւնը, եթէ բանտարկվածները չազատվեն։ Սպառնալիքը ազդեց և թիւրքաց կառավարութիւնը հրամայեց ազատել բանտարկեալներին։ (Н. Вр.)։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

13 ապրիլ

ԲԷԼԳՐԱԴ։ Ժամանեց ռուսաց դեսպան Գուբաստով։

ԼՈՆԴՈՆ։ («Րէյտ. գործ.»)։ Համայնքների ժողով։ Հնդկաստանի գործերի պետական քարտուղար Բրօդրիկ յայտնեց, որ Տիբէթի արշաւախումբը Գեանգցզէից աւելի հեռու չը գնաց։ Դալայ-լամայից ոչինչ տեղեկութիւններ չեն ստացված։

ՏՕԿԻՕ։ («Րէյտ. գործ.»)։ Պորտ-Արտուրի և Դալնիի միջև դրած ականնաւերի մեծ թիւը ստիպում է Դեղին ծովի վրա հաղորդակցութիւն պահպանող եապօնական շոգենաւային ընկերութիւններին խուսափել Չէմուլպօից աւելի հեռու որ և է երթևեկութիւնից։ Եապօնական «Ազամա» կրէյսէրը պայթեցրեց ականը, որ գտաւ Շան-դունեան հրուանդանից քառասուն մղոն հեռաւորութեամբ։ Երկիւղ են կրում, որ ծովի մէջ ազատ լողացող ականների մեծ թիւ հոսանքները քշել տարել են հարաւային ուղղութեամբ, այդ պատճառով նաւերի լողալը վտանգաւոր է մինչև անգամ ցերեկով։ Մինչև այժմ գործնական միջոց չէ գտնված սպառնող վտանգի առաջն առնելու համար։

ԲԵՐԼԻՆ։ Տօկիօից հաղորդում են, որ սկսվեց եապօնական հետևեալ 4 դիվիզիաների, այն է 5, 8, 10 և 11-րդ, մօբիլիզացիան, որոնք կը կազմեն եապօնական երրորդ զօրամասը։ Զօրամասի հրամանատար անուանում են գեներալ Նօդզուին։ Եապօնական առաջին երկու զօրքերից իւրաքանչիւրը բաղկացած է հարիւր հազար մարդուց, և ոչ թէ վաթսուն հազարից, ինչպէս կարծում էին։ Ինչպէս այժմ յայտնի դարձաւ, որոշ դիվիզիաների մօբիլիզացիայի ժամանակ միաժամանակ զէնքի էին կանչվում համապատասխան պահեստի բրիգադներ, այդպիսով առաջին զօրամասը բաղկացած է գվարդէական 2-դ և 12-դ դիվիզիաներից և գվարդիական 2-դ և 12-դ պահեստի բրիգադներից. երկրորդ զօրամասը բաղկացած է 1-ին, 3-դ և 4-դ դիվիզիաներից և 1-ին, 3 ու 4-դ պահեստի բրիգադներից։

ԶԷԼԵԱԲԻՆՍԿ։ Ոտք դնելով Ասիայի սահմանները, շտալմէյստէր Րօզդեանկօի դիւրաշարժ զօրաբաժինը սրտագին ողջոյն է ուղարկում ազգականներին, բարեկամներին և ծանօթներին։ Բոլորը առողջ են։

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՎՍԿ։ («Րէյտ. գործ»)։ Արտասահմանեան զինւորական կցորդները, որոնք գտնվում են եապօնական առաջին զօրամասի մէջ, ծանուցում ստացան, որ շաբաթ օր պէտք է պատրաստ լինեն զօրքի հետ ճանապարհ ընկնելու։

ԱԹԷՆՔ։ Յունական նաւատորմը առ այժմ տեղից չէ շարժվում. յոյս ունեն, որ Զմիւռնիայում տեղի ունեցած միջնադէպը խաղաղ ճանապարհով կը կարգադրվի։

ՀՌՈՄ։ Ապրիլի 12-ին Կվիրինալում կայացաւ հանդիսաւոր ճաշ ի պատիւ նախագահ Լուբէի։ Թագաւորը և նախագահը կենացներ առաջարկեցին։

ԱԼԲԷՐՕՆԱ։ «Հօհէնցօլէրն» զբօսանաւը ցերեկվայ 6 ժամին հասաւ Մալամօկկօ նաւահանգիստը, Վենետիայի մօտ։ Կայսրը ընդունեց բարձրաստիճան պաշտօնատար անձանց և գերմանական հիւպատոսին։ Ապրիլի 13-ին նշանակված է Վենեցիա մուտ գործելը։

ՑԱՐԻՑԻՆ։ «Կավկազ և Մէրկուրի» ընկերութեան շոգենաւը նաւագնացութիւն սկսեց դէպի վերև։

ԿՐՕՆՇՏԱԴՏ։ Ապրիլի 12-ին երեկոյեան մեծ անիւային շոգենաւեր շոգենաւային ուղղակի հաղորդակցութիւն սկսեցին Պետերբուրգի հետ։—Ծովից եկաւ «Ֆալկէնշտէյն» գերմանական առաջին շոգենաւը։

ԼՕՆԴՕՆ։ (Րէյտ. գործ.)։ Չինական ամբանը Լխասսում նամակ ստացաւ գնդապետ Եօնգխէզբանդից։ Վերջինս ծանուցանում է, որ իր Գեանգցզէ գալու ժամանակ ինքն յոյս ունի հանդիպելու այնտեղ չինական ամբանին և Տիբէթի բարձր պաշտօնատար անձանց դաշնագիր կապելու համար։ Ամբանը պատասխանեց, որ երեք շաբաթից յետոյ նա կայցելէ Գեանգցզէ տիբէթեան ոչ բարձրաստիճան ներկայացուցչի ուղեկցութեամբ։ Դալայ-լաման շարունակում է սպասողական քաղաքականութեան հետևել, որովհետև դեռ ևս յոյս ունի Ռուսաստանի օգնութեան վրա։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ։ Դանիայի, Շվէցիայի և Նորվէգիայի կառավարութիւնները համաձայնութեան եկան այն որոշումների համիմաստութեան մասին, որոնք վերաբերում են վերոյիշեալ երեք պետութիւնների չէզոքութեան։

ՆԷԱՊՕԼ։ Հասաւ ֆրանսիական էսկադրան։

ՊՕՐՏ-ԱՐՏՈՒՐ, 13 ապրիլ։ Մեր ստորջրեայ մակոյկների հետ փորձերը փառաւորապէս աջողվեցին։ Պորտ-Արտուրի շրջանում հանգիստ է։

ՎԵՆԵՑԻԱ։ Վիլհէլմ կայսրին այսօր ջերմ ընդունելութիւն ցոյց տուին։ Կայսրը գոհ է իր ճանապարհորդութիւնից։ Նրա առողջական դրութիւնը և արտաքին տեսքը հիանալի են։

ԲՈՒԴԱՊԷՇՏ։ Երկաթուղիական ծառայողների գործադուլը կատարելապէս վերջացած է, մարդատար և ապրանքատար գնացքների երթևեկութիւնը կատարվում է կանօնաւոր կերպով։

ՄԱԴՐԻԴ։ Մինիստր-նախագահ Մաուրա ժամանեց առաւօտեան։ Ալիկանտէի և Լաէնչիայի միջև եղած ճանապարհին այն վագոնի վրա, որի մէջ նստած էր Մաուրա, հրացան արձակվեց. գնդակը դիպաւ առաստաղին, վնաս չը պատճառելով։

ՏՕԿԻՕ։ («Րէյտ. գործ.»)։ Եապօնական «Գօյօմարու» շոգենաւը ջրասոյզ անելուց առաջ, ռուսները հրամայեցին նաւի ծառայողներին ափ դուրս գալ Գէնզանում։

ՍԷՈՒԼ։ («Րէյտ. գործ.»)։ Ռուսական էսկադրան հեռացաւ Գէնզանից։

ՏԷԱՆՑԶԻՆ։ («Րէյտ. գործ.»)։ Այստեղ լուր է պտտում, որ երկուշաբթի գիշերը եապօնացիները ռմբակոծում էին Նիւ-Ջժուանի ամրութիւնները։

ՀՌՈՄ։ Ի պատիւ Լուբէի կայացաւ զօրահանդէս։ Թագուհին և Լուբէն կառքով անցան զօրքերի առջևից. թագաւորը հետևում էր ձի հեծած և շրջապատված շտաբով։

14 ապրիլ

ԲԵՐԼԻՆ։ (Յատուկ)։ Լօնդօնից հաղորդում են, որ Խակօդատէից ստացված հեռագրի համաձայն, այնտեղ ճանապարհ ընկնելու համար պատրաստ կանգնած են 10 եապօնական փոխադրող նաւեր և մի քանի պատերազմական նաւեր, որոնք ուղեկցելու են նրանց։—Եօկօհամայից ստացված տեղեկութիւնների համեմատ, այնտեղ յոյս ունեն հետևեալ ամսվայ ընթացքում բարձրացնել Չէմուլպօում ջրասոյզ եղած ռուսական «Վարեագ» կրէյսէրը։—Շանխայգուանից հաղորդում են, որ Պորտ-Արտուրի շրջականերում ռուսները նոր ամրութիւններ են կառուցանում։ Ռուս օֆիցէրների կարծիքով, առհասարակ շատ դժուար է Պորտ-Արտուրի գրաւումը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ապրիլի 13-ին Բարձրագոյն ներկայութեամբ կայացաւ գրենադէրեան գընդի և ուրալեան կազակների հարիւրեակի զօրահանդէս։

ԿՐՕՆՇԴԱԴՏ։ Պետերբուրգից հասաւ էսկադրային «Բօրօդինօ» զրահակիրը։

---

[1] Դիլիմանը Սալմաստի կենտրօնական քաղաքն է, ուր նստում են դատաւորը, սարփարաստը և ուրիշ պաշտօնեաները։

ՍՕՖԻԱ։ (Դիմադրական շրջաններից)։ Գեներալ դէ-Ջիօրջիս Սալօնիկից ճանապարհ ընկաւ Մօնաստիր։ Ժանդարմէրիայի ռէֆօրմի համար հրաւիրված արտասահմանեան օֆիցէրները սկսեցին կատարել իրանց պարտաւորութիւնները Սալօնիկում։

14 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նշանակված են. Նորին Մեծութեան փոխարքայի տրամադրութեան տակ գտնվող գեներալ-մայոր Կօզլօվ — առանձին յանձնարարութիւնների համար գեներալ փոխարքայի մօտ. զինւորական մինիստրութեան անդամ գեներալ-մայոր Եգերսկիյ—մանջուրական զօրքի հիւանդանոցների տեսուչ. փոխարքայի տրամադրութեան տակ գտնվող գնդապետ Վօրօնօվ—Նորին Մեծութեան փոխարքայի դաշտային շտաբի գլխաւոր բանակի կոմենդանտի պաշտօնակատար։

ՎԻՏԵԲՍԿ։ Ցերեկով, սաստիկ քամու ժամանակ, հրդեհվեց Իլինիշնա անուանված քաղաքամասը, ուր ապրում են գլխաւորապէս չքաւորները։ Հրդեհը բռնել է ահագին շրջան և այս րոպէիս էլ շարունակվում է. այրվեց քաղաքի Իլինսկայա հնագոյն եկեղեցին։

ՕՐԷՕԼ։ Երեկոյեան 7 ժամին Մօսկվա-կիւրսկեան երկաթուղով հարաւից ժամանեցին «Վարեագի» և «Կօրէեցի» ծառայողները։ Հերոսներին դիմաւորեցին աղմկալի ցոյցերով։ Կայարանում հաւաքվեցին նահանգապետ Բալեասնի, զինւորական և քաղաքացիական իշխանութիւնները, քաղաքի և զէմստվօի ներկայացուցիչները, աշակերտները և բազմաթիւ հասարակութիւն։ Քաղաքային պատգամաւորութիւնը մատուցեց աղուհաց։ Մասնաւոր անձանց մի խումբ ֆլիգել-ադիւտանտ Րուդնեվին մատուցեց ոսկէ դաշոյն։ Օֆիցէրներին պատւեցին ճաշով։ Զինւորներին հիւրասիրեցին։ Կէս ժամ կանգ առնելուց յետոյ գնացքը, քայլերգի հնչիւնների և անընդհատ «ուրանեբի» ուղեկցութեամբ, հեռացաւ դէպի Մօսկվա։ Ջեղած ոգևորութիւն էր տիրում։

ԱԴԷՆ։ («Րէյտ. գործ.»)։ Իլլիգ քաղաքը ռմբակոծութեան ենթարկվեց։ Իլլիգի սուլթանը գերի բռնվեց։

ՀՌՕՄ։ Լուբէի պատւին տուած զինւորական ճաշին, Թագաւորը և Լուբէն փոխանակվեցին սրտագին կենացներով։

ՊՕՐՏ-ԱՐՏՈՒՐ, 14 ապրիլի։ (Սեփական թղթակցից)։ Ապրիլի 14-ին «Нов, Край» լրագրում տպված են կանոններ ռուսաց զօրքերին կից գտնվող զինւորական թղթակիցների համար Հեռաւոր Արևելքում։

ՊՕՐՏ-ԱՐՏՈՒՐ, 14 ապրիլի։ (Սեփական թղթակցից)։ Առաւօտեան 7 ժամ 55 րոպէին շրջանում փոփոխութիւններ չը կան։ Մեր սառրջրեայ նաւակների հետ արած փառաւոր փորձերի առիթով, «Новый Край» լրագիրը այն միտքն է յայտնում, որ դրանով նոր հօրիզօններ են բացվում մեր փառաւոր նաւատորմի ակտիվ գործունէութեան համար։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ Վլադիմիրի տաճարում ողջերթի մաղթանք կատարվեց «Սեվաստօպօլ» զրահակրի նորից արևելք գնացող այն 55 ծառայողների համար, որոնք ռուսական միսիայի պաշտպաններն էին Սէուլում։ Առաջուց հաւաքված ծառայողներին կը յանձնվի, որպէս օրհնութիւն ծովապետ Սկրիդլօվից, Աֆօնից նրա ստացած պատկերը։ Տաճարի աւագ քահանան ասաց պատշաճաւոր քարոզ և մաղթանքից յետոյ պատկերով օրհնեց Սէուլի պահակազօրքի հրամանատար լէյտենանտին։ Ժամասացութեան վերջը փոխ-ծովապետ Կրիգէր տաճարի առաջ ողջունեց ծառայողներին և ասաց. «Մեր նախկին գլխաւոր հրամանատարի, այժմ նաւատորմի ձեր հրամանատարի և չէրնօմօրցիների անունից այս սուրբ պատկերով ողջերթ եմ մաղթում ձեզ դէպի հեռաւոր ուղին, Հեռաւոր Արևելքը։ Հաղորդեցէք, որ մենք նոյնպէս ապրում ենք նրանց ուրախութիւններով և խորապէս վշտանում ենք այն անաջողութիւններից, որոնք անխուսափելի են իւրաքանչիւր պատերազմի ժամանակ։ Հաղորդեցէք, որ մենք սրանից յետոյ ևս ջերմապէս կաղօթենք, որպէս զի յաղթէք թշնամուն յուրախութիւն պաշտելի Թագաւորի և ի փառս Աստուծու։ Թող Աստուած օգնէ ձեզ և այս պատկերը օրհնէ ձեզ»։ Ապա կոմանդան կնաց զօրանոցները։

ԿԱԼՈՒԳԱ։ Ժամանեց Մեծ Իշխան Սերգէյ Միխայլօվիչը, որպէս զի գննէ 3-րդ Թնդանոթաձիգ բրիգադան։

ՆԻՒ-ՉԺՈՒԱՆ։ (Րէյտ. գործ.)։ Թղթակիցներից վարձված նաւի վրայից ձերբակալված երկու եապօնացիները, երկուշաբթվայ բանտարկութիւնից յետոյ՝ ռուսական զինւորական իշխանութեան կողմից քննութեան ենթարկվեցին, ազատ թողնվեցին և Չիֆու ուղարկվեցին։ Իշխանութիւնը յայտնում է, որ բացի ռուս կամաւորների ձեռքով եապօնական մի քանի ջօնկաների խորտակումը, Եալուի վրա ոչ մի նոր ընդհարում չէ տեղի ունեցել։ Եապօնական ոչ մի խոշոր զօրախումբ չէ եկել Եալուի ափերը և ոչ մի տեղով գետը չէ անցել։ Ռուսները պահպանում են Եալուից արևմուտք եղած իրանց բոլոր նախկին դիրքերը։ Ասում էին, որ Կուրօպատկինի ծրագրով պէտք է յետ նահանջէին ռուսները դէպի Ֆինխուանչէն և Լեաօեան. բայց դա անհիմն է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ցերեկվայ ներկայացում

ԱՐԱՔՍԵԱՆԻ ՀԱՒԼԱԲԱՐԻ ՆՈՐ ԹԱՏՐՈՆ
Կիրակի, ապրիլի 18-ին
Հ. ՍԱՆԹՈՒՐՃԵԱՆԸ

Բարեհաճ մասնակցութեամբ դերասանուհի տ.տ. Արաքսեանի, Զաբէլի, դերասաններ պ.պ. Ամօ-Խարազեանի և մի խումբ սիրողների կը ներկայացնէ

I

«ՍԱՐՍԱՓԵԼԻ ԱՆՑՔ»

դրամա 1 գործ.

II

ԲԱՂԴԱՍԱՐ ԱՂԲԱՐ

կոմէդ. երեք գործ. հեղ. Պարոնեանի փոխ. Վրոյրի և Սարգարեանի։

III

Նոր պիէս, առաջին անգամ

ՍՕՆԱՅԻ ՆՇԱՆԴՐԷՔԸ

հեղ. Յար. Եսայեանի, վօդէվիլ 1 գործ.

Մասնակցում են. Տ.տ. Արաքսեան, Զաբէլ, օր.օր. Բէգիջանեան, Խումարեան, Քնարիկ, Էմմա, պ.պ. Ամօ-Խարազեան, Բաբուրեան, Սանթուրճեան, Թաշճեան, Ս. Անդրանիկ, Խուդանեան, Փիրումեան և ուրիշները։

Սկիզբն է ճիշդ 11 ժամին առաւօտեան

Թատրոնը կը լինի խիստ մրգեցրած եւ էլէկտրական լուսով զարդարված։

Տեղերի գինը 1 րուբլուց մինչև 10 կոպէկ։
2—4

ԲԺՇԿԱՊԵՏ

Դր. Տէր-Գրիգորեանց

ընդունում է հիւանդներին—ներքին (մասնաւորապէս կրծքի) և երեխայոց հիւանդութիւններ. 154. Միքայէլեան պրօսպէկտ, տէլէֆօն 825.
(շ. և. հ. չ.) 20—105

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներին, ամեն օր առաւօտեան 12—2, երեկոյեան 5—6։ Վեծ Վանքի փողոց, տուն Կուզանօվի, Բախչիեվի դեղատան կից։

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ

ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւն ամեն օր.

Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7

Վելիամինօվսկայա փ. № 16, տուն Եղիազարեանի։ 50—100

Իմ աշխատութեամբ լոյս են տեսել հետևեալ

ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

Աշակերտաց համար

1. Դասատետր կրօնի	ա.	տարի	. — 25
2. » »	բ.	»	. — 20
3. » »	գ.	»	. — 30
4. Հին-ուխտ	դ.	»	. — 35
5. Նոր-ուխտ	ե.	»	. — 40
6. Գործք առաքելոց	զ.	»	. — 40

Ուսուցչաց համար

7. Ուղեցոյց կրօնի—հին-ուխտի (սպառ.)	— —
8. » » —Նոր-ուխտի	. 2—50
9. Ուսումն քրիստոնէական կրօնի Դ. հ.	1—50
10. » » » Ե. »	— 50

Ինձ դիմողները ստանում են 1) 6 տարիների համար 25%. 2, 3, 4, 5 տարիների համար 20%, իսկ 7, 8, 9, 10 տարիների համար 35% զեղջ։

Կարելի է դիմել—1) ինձ (Коммерческое училище), 2) Центральная книжная торговля և 3) Книжный магазинъ «Гуттенбергъ».

Սահակ քահ. Սահակեանց
72—100

Լոյս տեսաւ պատկերազարդ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻ

Ներկայ տարվայ առաջին (IX) գիրքը

Բովանդակութիւն.

Հին Հայոց իրաւունքը եւ նրա հետազօտելու մեթոդը. Խ. Սամուէլեանի.—Բօրչալուի գաւառ. բանաւոր գրականութիւն. Ե. Լալայեանի—Հայ աշուղներ. Գ. Լևոնեանի.—Մամօ եւ Զինէ քրդական ժողովրդական վէպ. Նժդեհեանի։—Նախիջեւանի գաւառ ա. մասն՝ Գողթն. Ե. Լալայեանի. — Մատենախօսութիւն՝ Կարա-Մուրզայի։ Պատկերներ լուսատիպ և ցինագրում։

Երկու՝ XI և XII՝ գրքերի բաժանորդագինն է 3 ր.։ Մի գիրքն արժէ 2 ր.։

Նախկին գրքերը վաճառվում են խմբագրատանը բաժանորդագրական գնով։

Դիմել՝ Ервавду Лалаянцъ. Тифлисъ, Семинарія Нерсесянъ, կամ Саперная 5. 1—3

Լոյս տեսաւ
ՆՈՐ-ԳԻՐՔ

ԱՆՀՈՏՆԻ ԷՋԵՐՈՒՄ

Բանաստեղծութիւններ Հ. Համբարձումեանի

Գինը 60 կոպ.

Գումարով գնողներին զեղջ 30%

Դիմել՝ Պետերբուրգ, Պուշկինեան արագատիպ, Լեշտուկօվ փ. 4, և Թիֆլիսի ու Բագուի գրավաճառներին։ 1—2

«ԳՈՒՏՏԷՆԲԷՐԳ»

գրախանութում վաճառվում են հետևեալ նոր հրատարակութիւնները.

Գործարան թէ երկրագործութիւն, թժ. Ա. Բուդուղեանի 15 կ.
Ընտրութիւն կարճատուների, Գ. Մեծատուրեանի գինն է 15 կ.
Պատկերներ, Սենկեվիչի և Նաժեվինի գ. 7 կ.
Քար երգում է, փոխ. Յ. Դուրբախեանի 10 կ.
Լեգենդա, Նաժիվինի, թարգմ. Վ. Ազատեանի, գինն է 7 կ.
1500 տարի առաջ (404—1904) հայոց տառերի գիւտը Ի. Յարութիւնեանի 20 կ.
Երեք մահ, պատմուածք Տօլստոյի գ. 10 կ.
Ի՞նչ է ճշմարտութիւնը, թարգմ. Մամբրէ Վարդապետի, գինն է 10 կ.
Գթութիւն, թարգմ. օրիորդ Աղանեանցի 5 կ.
Ապուշը, » » » 5 կ.
Ուղեղի ճոռոգումը, » » » 5 կ.
Սեւ հացեր, » » » 5 կ.
Կնոջ վրէժը, թարգմ. Բաբուրեանի 3 կ.
Ռեբեկա, զրոյց Ա—Դոի 3 կ.
Սուսր, էտիւդ, Անդրէեվի, թարգմ. Յակոբեանի, գինն է 5 կ.
Հեռաւոր Արեւելքի կարտ, (Մանջուրիա, Կօրէա և Եապօնիա) գինն է 35 կ.

Դիմել՝ Тифлисъ: Книжный магазинъ „Гуттенбергъ“. 1—2

Յովհաննէս Արամեանցի հրատարակութեամբ լոյս են տեսել հետեւեալ պատկերազարդ հրատարակութիւնները.

1. Բեօրնսօն՝ կազմեց Ե. Թոփչեան	. 10 կ.
2. Մահմեդ՝ » » »	. 7 »
3. Մեսրոպ Մաշտոց՝ կազմեց Ե. Թ.	. 5 »
4. Սահակ Պարթև՝ » »	. 5 »
5. Հաուպտման՝ » »	. 15 »
6. Մեծն Ներսէս՝ » »	. 10 »
7. Զրադաշտ, կազմեց Մ. Թամամշեան	. 7 »
8. Ընտրութիւն կաթնատուների կամ կաթնատու կովերը ճանաչելու միջոցները, 26 պատկերով Գ. Մեծատուրեանի	15 »

Շուտով լոյս է տեսնելու 1. Պուշկին, 2. Վիրխօվ.

Պատրաստ է տպագրութեան համար՝

Ալ. Քալանթար. — Հանրամատչելի ձեռնարկ կաթնատնտեսութեան։

Պատրաստվում են նոր հրատարակութիւններ։

Դիմել՝ Тифлисъ: Книжный магазинъ „Гуттенбергъ“. 1—3

Զգուշացէ՛ք կեղծումներից

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՈՆ

Գ. Ֆ. ԻՒՐԳԷՆՍ

Ոչնչացնում է պեպինները, սևութիւնը, դեղին բծերը, պզզիկները և պուտկները և ներգործում է աւելորդ քրտնելու դէմ։ Խորհուրդ է տրվում ձեռք բերել, որպէս տուալէտային անուշահոտ սապօն, բարձր արժանաւորութեան։

ՈՍԿԷ ՄԷԴԱԼ 1893 թւի համար։

Կտորի գինը 50 կ., 1/2 կտորի 30 կ.։

Ծախվում է բոլոր ամենալաւ դեղագործական մագազիներում և դեղատներում։

Գլխաւոր պահեստը ամբողջ Ռուսաստանի համար Գ. Ֆ. Իւրգէնսի մօտ Մօսկվայում։ Դէպօ, Թիֆլիսում, Ազմուրօվի մօտ, դեղագործական ապրանքների առևտրի կովկասեան ընկերութեան մէջ, Շուրինօվի և Գրիմշակի, պ.պ. Պօպօֆների և Արխատակօվի մօտ։ (1, 15) 6—24

Լոյս տեսաւ

ՅՈՎՀ. ԱՐԱԲԱՋԵԱՆԻ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Առաջին տարի

չորրորդ տպագրութեամբ

Դիմել հեղինակին և գրավաճառներին 3—5

„ՇՂԹԱՅ“

Նաւթարդիւնաբերական ընկերութեան վարչութիւնը հրաւիրում է պ.պ. բաժնատէրերին տարեկան ընդհանուր ժողովի, որ տեղի է ունենալու ուրբաթ, ներկայ ապրիլի 23-ին, երեկոյեան 7 ժամին, քաղաքային տան դահլիճում։

Զբաղմունքի առարկաներն են.

1) Վերաքննիչ յանձնաժողովի երեք անդամների և նրանց երկու թեկնածուների ընտրութիւնը։
2) Վարչութեան անդամ Ն. Ա. Ալիխանեանի Թիֆլիսից մեկնելու հարցը։
3) Վարչութեան անդամներին 1904 թւից սկսած վարձատրելու հարցը։

Որոշված թւով բաժնատէրեր չեկած դէպքում, երկրորդ անգամ ժողովը կը կայանայ նոյն տեղում կիրակի օրը, ապրիլի 25-ին, առաւօտեան ժամը 10-ին և օրինաւոր կը համարվի, որքան էլ որ բաժնատէրեր ներկայ լինեն։ (հ. շ. ո.) 1—3

ԾԱՂԿԵՍԱՅ Օ-ԴԸ-ԿՕԼՕՆ

„ՀՈՏԱՒԷՏ ԿԱԿԱՉ“

Գեղեցիկ սրուակում

ՇԱՏ ՀԱՃԵԼԻ ՀՈՏ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.

5—6 (օ. 25, հ. 28, դ. 28, փետր. 25, ապ. 25, յուն. 25) (Метцль). 148, 168,

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԲՐՕԿԱՐ և ԸՆԿ.

ՆՈՐՈՒԹԻՒՆ! ՕԾԱՆԵԼԻՔ

„VIOLETTE MUSQUÉE.“

Հաճելի և երկարատև հոտ.

5—6 օ. 15, հ. 15, դ. 15, յ. 15, մ. 15, մ. 15. (Метцель) 148—180

Дозволено Цензурою. Тифлисъ, 14-го апрѣля 1904 г. Տպարան «ՀԵՐՄԷՍ» Типографія «ГЕРМЕСЪ» С. Назарянца, Мих. пр. № 81.